Պ-**181**-06.06.2019-ԱՍ-011/0

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ՕՐԵՆՔԸ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-124-Ն աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 95-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Եթե նույն գործատուի մոտ նույն աշխատողի հետ նույն աշխատանքի համար որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է ~~երկուսից ավելի անգամ~~ կամ նույն գործատուի մոտ նույն աշխատանքի համար նույն աշխատողի հետ ~~երկուսից ավելի~~ երկրորդ անգամ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որոնց ընդհատումը չի գերազանցում մեկ ամիսը, ապա աշխատանքային պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով: Սույն մասում ամրագրված դրույթը չի տարածվում սույն հոդվածի 1-ին և 3-րդ ~~և 4-րդ~~ մասերով նախատեսված դեպքերի վրա:»:

2) 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) Օրենքով սահմանված ժամկետով նշանակված աշխատողների հետ.».

~~3) Լրացնել նոր բովանդակությամբ 4-րդ մասով.~~

~~«4. Համատեղությամբ աշխատանք կատարողների հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է որոշակի ժամկետով, եթե աշխատողն այդ մասին գրավոր միջնորդել է կամ տվել է գրավոր ձևով արտահայտված համաձայնություն: »:~~

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: